ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
С. ШАУМЯНА

22 ապրիլի 2013 թ.
գ. Շահումյան

N 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղահրամանյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 12-ին ընդունած որոշումները :

Առդիր՝ 8 թերթ:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Մուտք թիվ 3839-13
«25» 04 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2013թ. թիվ 08

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 12-ի թիվ 2 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝	7 կողմ /ստորագ./	0 դեմ/ստորագ/	ձեռնպահ/ստորագ./
1. Ս. Պողոսյան			
2. Կ. Եղիազարյան			
3. Ք.Սադոյան			
4. Ե. Նավասարդյան			
5. Ս.Հարությունյան			
6. Ա.Գրիգորյան			
7. Վ.Համբարձումյան			

Շահումյանի գյուղական համայնքի ղեկավար Հ.Գ.Նավասարդյան

2013 թվականի ապրիլի 12

գ. Շահումյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի
ԹԻՎ 08 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգը հաստատելու մասին:

   Զեկուցող՝ համայնքի ղեկավար Հ.Գ. Նավասարդյան

2. Համայնքի ներտնտեսային ջրանցքների վերականգնման ներդրումային ծրագրի իրականացման մասին:

   Զեկուցող՝ համայնքի ղեկավար Հ.Գ.Նավասարդյան

3. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը հաստատելու և համայնքի ավագանու 2009 թվականի մարտի 27-ի N1 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

   Զեկուցող՝ համայնքի ղեկավար Հ.Գ.Նավասարդյան

4. Խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և համայնքի ավագանու 2009 թվականի հուլիսի 29-ի թիվ 02 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

   Զեկուցող՝ համայնքի ղեկավար Հ.Գ.Նավասարդյան

5. Դրամական օգնություն տրամադրելու մասին:

   Զեկուցող՝ համայնքի ղեկավար Հ.Գ.Նավասարդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2013թ թիվ 09

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մասնակցել ներդրումային ծրագրին՝ շինարարական աշխատանքների 15%-ի համաֆինանսավորման պայմանով :
2. Հաստատել՝ վերանորոգման ենթակա հետևյալ ջրանցքները.
   բաժանարար 1 - 700 գծմ, բաժանարար 2- 700 գծմ, բաժանարար 3-600 գծմ :
3. Առաջնահերթության կարգով վերականգնել հետևյալ ջրանցքները.
   ա/ բաժանարար 1 , բաժանարար 2, բաժանարար 3 ,
   բ/ ջրանցքների վերջնական առաջնահերթությունը կհաստատվի ՋՕԸ-ի վարչական խորհրդի նիստի կողմից, ջրանցքների տեխնիկա-տնտեսական ցուցանիշների հիման վրա, որոնք կհաշվարկվեն ՋՕԸ-ի կողմից:
4. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ավագանու անդամներ՝	7 կողմ /ստորագ./	0 դեմ/ստորագ/	ձեռնպահ/ստորագ./
1. Ս. Պողոսյան			
2. Կ. Եղիազարյան			
3. Ք.Սադոյան			
4. Ե. Նավասարդյան			
5. Ս.Հարությունյան			
6. Ա.Գրիգորյան			
7. Վ.Համբարձումյան			

Շահումյանի գյուղական համայնքի ղեկավար՝ Հ.Գ.Նավասարդյան

2013 թվականի ապրիլի 12
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2013թ թիվ 10

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N1 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2009 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու մասին» N1 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ավագանու անդամներ՝	7 կողմ /ստորագ./	0 դեմ/ստորագ/	ձեռնպահ/ստորագ./
1. Ս. Պողոսյան			
2. Կ. Եղիազարյան			
3. Ք.Սադոյան			
4. Ե. Նավասարդյան			
5. Ս.Հարությունյան			
6. Ա.Գրիգորյան			
7. Վ.Համբարձումյան			

Շահումյանի գյուղական համայնքի ղեկավար՝ Հ.Գ.Նավասարդյան

2013 թվականի ապրիլի 12
գ.Շահումյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի
ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ

ՆՈՐ ԿԱԶՄ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ

1. Պողոսյան Սահակ Միշայի
2. Գրիգորյան Ազնիվ Գրիգորի
3. Սադոյան Քյարամ Ազիզի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2013թ թիվ 11

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի ԹԻՎ 02 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2009 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 02 որոշումը

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ավագանու անդամներ՝	7 կողմ /ստորագ./	0 դեմ/ստորագ/	ձեռնպահ/ստորագ./
1. Ս. Պողոսյան			
2. Կ. Եղիազարյան			
3. Ք.Սադոյան			
4. Ե. Նավասարդյան			
5. Ս.Հարությունյան			
6. Ա.Գրիգորյան			
7. Վ.Համբարձումյան			

Շահումյանի գյուղական համայնքի ղեկավար՝ Հ.Գ.Նավասարդյան

2013 թվականի ապրիլի 12
գ. Շահումյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի
ԹԻՎ 11 ՈՐՈՇՄԱՆ

ՆՈՐ ԿԱԶՄ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Նավասարդյան
2. Հանձնաժողովի քարտուղար՝ 1-ին կարգի մասնագետ Հ.Բարսեղյան
3. Հանձնաժողովի անդամներ՝
   1/ Շահումյանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Ա. Գրիգորյան
   2/ Շահումյան համայնքի գրադարանի վարիչ Ա.Վարդանյան
   3/ Շահումյան համայնքի ավագանի Ս.Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2013թ թիվ 12

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան գյուղական համայնքի սոցիալապես անապահով մեկ ընտանիքի՝ Թելի Դիարի Մամոյանին 10 բաժին 7 խումբ 1 դասի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից հատկացնել 150000 / մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ գումար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝	7 կողմ /ստորագ./	0 դեմ/ստորագ/	ձեռնպահ/ստորագ./
1. Ս. Պողոսյան			
2. Կ. Եղիազարյան			
3. Ք.Սադոյան			
4. Ե. Նավասարդյան			
5. Ս.Հարությունյան			
6. Ա.Գրիգորյան			
7. Վ.Համբարձումյան			

Շահումյանի գյուղական համայնքի ղեկավար Յ.Գ.Նավասարդյան

2013 թվականի ապրիլի 12
գ.Շահումյան